ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/27

ք. Երևան <<13>> 08 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Ամրոց Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Վ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել գրքի կազմման և վերջնամշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ ևպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5140000(հինգ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագածվեճերը լուծվում ենբանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.11 Սույնպայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոն քունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ամրոց Գրուպ» ՍՊԸ
ք.Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Կասյան 3/26
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
հ/հ 900011032944	հ/հ 2471200292660000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00041071
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Վ. Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

13 08 **Հավելված 1**
<<>><<>> 2020թ կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/27 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Ծառայության						
Չափաբաժնի համարը	**Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմանի (CPV)**	**Անվանումը**	**Տեխնիկական բնութագիրը**	**Չափման միավորը**	**Ընդհանուր գինը ՀՀ դրամ,**	**Ընդհանուր քանակը**	**Մատուցման ժամկետը**
1	79971100/4	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-1	**Ծառայության անվանումը՝ <<Լյուդվիգ վան Բեթհովեն, Դաշնամուրային ստեղծագործություններ>>,** Զավեն Վարդանյան (կազմող) **Գնվող ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Ժողովածուն բաղկացած է Բեթհովենի դաշնամուրային սոնատիներից, վարիացիաներից և այլ դաշնամուրային ստեղծագործություններից: Նախատեսված է արվեստի և երաժշտական դպրոցների միջին և բարձր դասարանների աշակերտների համար: Հրատարակվում է մեծ կոմպոզիտորի ծննդյան 250-ամյակի կապակցությամբ: **Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60.84 1/8 Ծավալը՝ 12.0առնվազն տպագր. մամուլ Տպաքանակ՝ 250 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գր. Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12, նոտաներ Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Gohar Շապիկը՝ 300 կավճապատ Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: **Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական	դրամ	900000	1	10.12.2020թ

			բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** Ծառայություն մատուցողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 12.0 տպագրական մամուլ: Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:				
2	79971100/5	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-2	**Ծառայության անվանումը՝<<Հայ հոգևոր երաժշտություն I հոգևոր երգեր**>>(ուսումնական ձեռնարկ) Նունե Աթանասյան (կազմող) **Գնվող ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Ժողովածուում ընդգրկված են ժողովրդական և եկեղեցական հոգևոր երգեր: Ընտրված նյութը նպատակ ունի դպրոցականներին և ընթերցողի լայն շրջանակներին ծանոթացնելու հայ ժողովրդական երգերի հոգևոր ենթաշերտին, ինչպես նաև հայ միջնադարյան հեղինակների լավագույն ստեղծագործություններին: Ժողովածուն բաղկացած է երկու բաժնից: հոգևոր թեմաներ ժողովրդական երգեր և եկեղեցական երգեր՝ շարականներ, Սբ. Պատարագի, ժամերգության մեղեդիներ, տաղեր, գանձեր և այլն: Հավաքածուի միջոցով ընթերցողը անկախ մասնագիտության ընտրությունից կծանոթանա և կառնչվի հայ երաժշտական մշակույթի այս հնագույն և կարևոր դրսևորումներին: **Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ Չափը՝ 60.84 1/8 Ծավալը՝ 8,0 առնվազն տպագր. մամուլ Տպաքանակ՝ 250 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գր. Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 11-12, նոտաներ Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Gohar Շապիկը՝ 300 կավճապատ Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները:	դրամ	800000	1	10.12.2020թ

			Ծառայության որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀUS 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** Ծառայություն մատուցողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 8.0 տպագրական մամուլ: Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:				
3	79971100/8	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-3	**Ծառայության անվանումը՝<<Վարժություններ և ստեղծագործություններ մանկական փողային նվագախմբերի համար**>>մաս II(պարտիտուրա և ձայներ) Իրինա Գասպարյան (կազմող) **Գնվող ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Ժողովածուն ուսումնական ուղղվածություն ունի, քանի որ ստեղծագործություններից բացի պարունակում է նաև վարժություններ, որոնք կոչված են օգնել երիտասարդ կատարողներին որոշակի հմտություններ ձեռք բերել անսամբլային կատարողության ասպարեզում: Ստեղծագործություններն ընտրելիս կազմողը ղեկավարվել է հետևյալ սկզբունքով, որ նյութը լինի ոչ միայն գեղեցիկ և ուսանելի, այլև մատչելի սկսնակ նվագախմբային երաժիշտների համար: Հրատարակվում են ստեղծագործությունների պարտիտուրները և առանձին գործիքների ձայնաբաժինները: **Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60 x 84 1/8 Ծավալը՝ 22.5 առնվազն տպագր. մամուլ Տպաքանակ՝ 150 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գր. Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12, նոտաներ Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Gohar	դրամ	1500000	1	10.12.2020թ

			Շապիկը՝ 300 կավճապատ Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: **Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** Ծառայություն մատուցողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 22.5 տպագրական մամուլ: Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:				
4	79971100/7	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-4	**Ծառայության անվանումը՝<<Ստեղծագործություններ և փոխադրումներ քանոնի համար>>** (5-7 դասարանների համար), Անժելա Աթաբեկյան (կազմող) **Գնվող ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Հատորն իրենից ներկայացնում է հայ ժամանակակից կոմպոզիտորների մանկական երգերի հատընտիր: Այն միտում ունի դուռ բացել պատանի երգիչների համար դեպի արդի հայ կոմպոզիտորական դպրոց: Երգերը դասակարգված են ըստ բարդության, հաշվի են առնված մանկական ձայնի առանձնահատկությունները: Այս ժողովածուն կարող է ծառայել որպես լրացուցիչ նյութ՝ երաժշտական, արվեստի դպրոցների, ուսումնական ծրագրերի համար: **Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60 x 84 1/8 Ծավալը՝ 15.0 առնվազն տպագրական մամուլ Տպաքանակ՝ 200 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գր. Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12, նոտաներ Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Gohar Շապիկը՝ 300 կավճապատ	դրամ	970000	1	10.12.2020թ

			Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: **Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** Ծառայություն մատուցողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 15.0 տպագրական մամուլ: Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:				
5	79971100/6	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-5	**Ծառայության անվանումը՝** **<<Հայ կոմպոզիտորները՝ մանուկներին>>**(1-7 դասարանների համար)(ուսումնական ձեռնարկ), Լիլիթ Հարությունյան (կազմող) **Գնվող ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Հատորն իրենից ներկայացնում է հայ ժամանակակից կոմպոզիտորների մանկական երգերի հատընտիր: Այն միտում ունի դուռ բացել պատանի երգիչների համար դեպի արդի հայ կոմպոզիտորական դպրոց: Երգերը դասակարգված են ըստ բարդության, հաշվի են առնված մանկական ձայնի առանձնահատկությունները: Այս ժողովածուն կարող է ծառայել որպես լրացուցիչ նյութ՝ երաժշտական, արվեստի դպրոցների, ուսումնական ծրագրերի համար: **Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60.84 1/8 Ծավալը՝ 15.0 առնվազն տպագր. մամուլ Տպաքանակ՝ 200 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գր. Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 11-12, նոտաներ Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Gohar Շապիկը՝ 300 կավճապատ Տպագրության տեսակը՝ օֆսեթ:	դրամ	970000	1	10.12.2020թ

			Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: **Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** Ծառայություն մատուցողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 15.0 տպագրական մամուլ: Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:				

1-5- րդ չափաբաժինների համար

Ծառայությունների մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Հատուկ նշագրում՝ - գրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:
Փոխադրումը և բեռնաթափումը՝- Կատարողի կողմից՝ ամբողջ քանակը հանձնելով «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ (հասցե՝ ք. Երևան,Տերյան 72)

Պատվիրատու

----------Վ. Գասպարյան

Կատարող

----------Վ. Խաչատրյան

Հավելված N 2
« 13 » « 08 » 2020թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/27գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում*												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	79971100/4	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-1											900000	900000	900000
2	79971100/5	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-2											800000	800000	800000
3	79971100/8	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-3											1500000	1500000	1500000

4	79971100/7	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-4											**970000**	**970000**	**970000**
5	79971100/6	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-5											**970000**	**970000**	**970000**

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

Պատվիրատու

----------Վ. Գասպարյան

Կատարող

----------Վ. Խաչատրյան